ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԺՈՂՈՎ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, կարեւորելով կիրակնօրյա վարժարանների դերակատարությունը ծխական համայնքներում, տեղերում առկա խնդիրները վերհանելու եւ ծրագրային գործունեությունն առավել կանոնակարգելու նպատակով «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համատեղ դեկտեմբերի 2-3-ը՝ մասնակցությամբ կիրակնօրյա վարժարանների գործունեությունը համակարգող հոգեւորականների, մանկավարժների եւ «Վորլդ Վիժն»-ի տարածքային զարգացման գրասենյակների ներկայացուցիչների՝ համաժողով անցկացրեց Ծաղկաձորում:

Համաժողովին բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի ՔԴԿ բաժնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վարդան վարդապետ Նավասարդյանը: Նա կարեւորեց կիրակնօրյա դպրոցների առաքելությունը եւ անհրաժեշտությունը համայնքային կյանքում: Հայր Սուրբն անդրադարձավ երկօրյա աշխատանքային հանդիպումների նպատակներին եւ անելիքներին, որոնք պետք է օգնեն առաջիկայում սպասվող երկամյա ռազմավարության մշակմանը՝ նախանշելու կատարվելիք աշխատանքների ուղղությունները: Համաժողովի շրջանակներում իրականացված խմբային համակողմանի քննարկումների եւ համապատասխան զեկուցումների արդյունքում վերհանվեցին կիրակնօրյա կրթօջախների առօրյա գործունեության ընթացքում հանդիպող կազմակերպչական, ծրագրային, բովանդակային, նյութատեխնիկական դժվարությունները եւ առաջարկվեցին լուծման հնարավոր ուղիներ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ՖՐԱՆՍԻԱ

Դեկտեմբերի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ֆրանսիայի հայոց թեմ, ուր նույն օրը Փարիզում Նորին Սրբությունը ներկա եղավ իր բարձր հովանու ներքո կազմակերպված՝ աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալյեի մեծարման երեկույթին:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ թեմական խորհրդի, ինչպես նաեւ եկեղեցական վարչական անդամների հետ:

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԵՂԻԱ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դեկտեմբերի 12-ի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Եղիա աբեղա Խաչատրյանը՝ ուխտազանցության եւ եկեղեցականին անհարիր ընթացքի համար:

Տ. Եղիա աբեղա Խաչատրյանի հարցը քննության է առնվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող Կարգապահական հանձնախմբի կողմից եւ ներկայացվել կարգալուծության:

Այսուհետ կարգալույծ եկեղեցականը դասվում է աշխարհականների շարքը՝ Արմեն Խաչատրյան ավազանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Կարապետ ավ. քհն. Գլընճյան (Վանորեից Տեսչություն)

Հովհաննես Բագուբյան (Արգենտինայի թեմ)

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Անի Սիմոնյան Թոթա (ԱՄՆ Արեւելյան թեմ)

Ռեյ Ռիդր (Արմավիրի թեմ)